ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ (ԷԱՃ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 18-ը հոկտեմբերի 2018թ.
Ժամը 11^{10}

Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի կողմից հայտերի բացումն իրականացվել է 15.10.2018թ., ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 17.10.2018թ.: Աճուրդի ամփոփման արդյունքները ներառված են սույն արձանագրության մեջ:

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տ. Ղարիբյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալի ՊԺԿ, Ա. Մուրադյան
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության հսկողության բաժնի գլխավոր մասնագետ Խ. Սմբատյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

Հանձնաժողովն արձանագրեց աճուրդի արդյունքների ամփոփման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված դիմում-հայտարարություններն ուսումնասիրելուց հետո:

22.10.2018թ., ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.eauction.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 Ըստ **www.eauction.armeps.am** կայքի տվյալների՝ ՀՀ ՊՆ կարիքների համար **«Շինանյութերի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակիցների անվանում
1.	«ՎԱՐԲԱԴ» ՍՊԸ
2.	«Օստինատո» ՍՊԸ
3	Ա/Ձ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ
4	«ՄԱՐՄՈՆԱ» ՍՊԸ
5	«ԴՅՈՒ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 **Eauction** համակարգի կողմից չմերժված «Վարբադ» ՍՊԸ-ի, «Օստինատո» ՍՊԸ-ի և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) **դիմում-հայտարարություններն** առկա են:

2.2 «Վարբադ» ՍՊԸ-ի և «Օստինատո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունները** համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին

(պահանջներին): Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունը** չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝ դրանում նշված չեն իրական շահառուի հայրանունը և վերջինիս անձը հաստատող փաստաթղթի տեսակը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ա/Ձ Գրիգոր Այվազյանին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը: Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել մասնակցի կողմից պահանջվող շտկումը ներկայացնելուց հետո:

24.10.2018թ., ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Քննարկելով **Eauction** համակարգի միջոցով Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի 1 հավելվածով նախատեսված դիմում-հայտարարության շտկված տարբերակը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դա գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի տեխնիկական խափանման հետևանքով հանձնաժողովի անդամների մոտ մինչև 26.10.2018թ. չէր առաջանում համակարգի ներսում փաստաթղթի գնահատման առաջադրանքը, ուստի գնահատման արդյունքների արձանագրումը կատարվել է տեխնիկական խնդրի կարգավորումից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

(Ա. Մաղաքյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացվել են մասնակիցների ***նախնական*** և ***վերջնական*** գնային առաջարկները. **Տես Հավելված N 1:**

3.2 Հանձնաժողովը որոշեց՝ 2-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին. մասնակիցների առաջարկած գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսած ֆինանսական միջոցների չափը, ինչ հիմք ընդունելով վերջիններիս հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվեցին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 Հիմք ընդունելով **Eauction** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացված ***նախնական*** և ***վերջնական*** գնային առաջարկները, ինչպես նաև համակարգի կողմից չմերժված մասնակիցների կողմից ներկայացված **դիմում-հայտարարությունների** գնահատման արդյունքները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Վարբաղ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Տ. Ղարիբյան
Գնահատող	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
գնահատող	Խ. Սմբատյան
Քարտուղար	Ա. Մաղաքյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Eauction համակարգի կողմից իրականացված հայտերի բացման և հակադարձ աճուրդի իրականացման արդյունքում գեներացված նախնական և վերջնական գնային առաջարկներ

Հ/հ*	Անվանում	Հ/հ	Ընկերություն	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցության իրավունք	Առաջին տեղ զբաղեցնող մասնակից
					Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին		
1	Տախտակ	1	«ՎԱՐԲԱԴ» ՍՊԸ	5,200,120	3,891,250	778,250	4,669,500	3,396,000	679,200	4,075,200	-	«ՎԱՐԲԱԴ» ՍՊԸ
		2	«Օստինատո» ՍՊԸ	5,200,120	4,124,725	824,945	4,949,670	3,453,518.0	690,703.6	4,144,221.6	-	
		3	Ա/Ձ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ	5,200,120	4,811,000	0	4,811,000	3,687,000	0	3,687,000	-	
2	Լինոլեում	1	«ՄԱՐՄՈՆԱ» ՍՊԸ	7,750,000	6,875,000	1,375,000	8,250,000	6,800,000	1,360,000	8,160,000	Մերժված	
		2	«ԴՅՈՒ» ՍՊԸ	7,750,000	8,333,334.0	1,666,666.8	10,000,000.8	8,333,334.0	1,666,666.8	10,000,000.8	Մերժված	

Գնահատող(ԳԱՊ) Տ. Ղարիբյան

Գնահատող Ա. Մուրադյան

Գնահատող Ա. Պապյան

գնահատող Ռ. Սմբատյան

Քարտուղար Ա. Մաղաքյան